Following the 1908 revolution, the Parliament was reopened with elections of 288 members, including 147 Turks (including some Kurds), 60 Arabs, 27 Albanians, 26 Greeks, 14 Armenians, 10 Slavs, and 4 Jews. Two representatives from the Armenian Revolutionary Federation (ARF), one from the Thessaloniki Socialist Workers' Federation (SSIF), and one from the Social Democrat Hunchak Party (SDHP) started a "socialist deputies" caucus. These deputies spoke of the need to co-exist and fought for workers' rights, unions, women's rights, decentralized government. These deputies dreamed of creating a more harmonious society.

Akin expressed excitement when he first read Paramaz's internationalist political perspective expressed during his defense at the Van Court while


ond Constitutional Monarchy (1908-1915). As a researcher and journalist, Akin challenges both the nationalistic/'right-wing' and alternative/'left-wing' accounts of the past by shedding light on the pivotal contributions of Armenian, Greek, Jewish, and Bulgarian revolutionaries in the emergence of socialist politics in the late Ottoman era.

These Armenian intellectuals advocated for revolutionary ideas, including addressing the poverty brought by the economic destruction during the reign of Sultan Abdul Hamid, the 1908 Workers' Strikes, women's rights, freedom of the press, and the demands of the Christian peoples of the Empire. From the floor of the Ottoman Turkish Parliament, Deputies Vahan Papazyan of Van (above left) spoke out on education policies (May 8, 1911), Vartkes Serengulyan of Erzerum (above center) defended laborers' rights against the capitalist class, and Hampartzoum Boyadjian of

Adana (above right) spoke about workers' unions and fraternity.

Garo Paylan, who served for two consecutive terms—2015–18 & 2018–23—in the Grand National Assembly of Turkey representing Istanbul and Diyarbakir, expressed his personal thanks to Kadir Akin for uncovering the history of these progressive voices which "can break down the prejudices and bring unity across different ethnic groups in Turkey today as we struggle for a multicultural, democratic, and more equal society."

Dr. Jendian asked if any members of the audience knew about these stories, and not a single hand raised (including his own): "Thank you, Mr. Akin, for raising our collective awareness of our own history. This history is both important and personal to me,



as my own grandfather, identified with the Social Democratic Hunchakian party. Both you and Mr. Paylan have been living examples of courage, being willing to speak truth to power in a country where doing so could lead to imprisonment."

Article 301 of the Turkish Penal Code, effective as of June 1, 2005, makes it a criminal offense to insult Turkey, the Turkish nation, Turkish government institutions, or Turkish national heroes, punishable by imprisonment from 6 months to 2 years. In October 2011, sociologist Taner Akçam won a judgment in the European Court of Human Rights, which ruled that the Turkish laws against "denigrating Turkishness" were a violation of freedom of expression. Yet, in 2018, Garo

Paylan faced 2 indictments, including "defaming Turkey and the Turkish state" and "insulting Turkishness" for his comments referring to the 1915 Armenian genocide from the podium of the Turkish parliament.

More recently, in September 2023, Turkey's oldest film festival was canceled amid controversy surrounding a politically sensitive documentary about the aftermath of a 2016 coup attempt against the Turkish government and President Recep Tayyip Erdogan. The mayor of the city of Antalya announced the cancellation of the city's Golden Orange Film Festival after the Turkish Culture and Tourism Ministry withdrew its support for the event because of the film "Kanun Hükümü" or "Decree," a documentary which focuses on the hardships of a

teacher and a doctor who were dismissed from their jobs following an attempted coup in Turkey on July 15, 2016.

Paylan concluded the evening, reminding the audience that, whether we are discussing the Ottoman Empire of 1915 or the modern-day government of Azerbaijan, the Russian government under Putin or the United States, "governments do not have morals; they have interests." Even the future of the Republic of Armenia rests on that understanding and suggests possible courses of action. It's also up to the people to organize and speak up for justice—across ethnic lines and national boundaries—as public pressure creates the political will for leaders to do right by the people.

Momentum for the Establishment

Continued from page 1

in the draft of the peace treaty, a more comprehensive document which is going to be signed by the two countries.

"As soon as we come to an agreement on this issue in the context of a peace agreement, we will get very close.

There are a couple of other issues, for instance, the unblocking of the regional transport infrastructure, which is also being discussed. In this context it is important to know that Armenia is not only ready but is interested in becoming a part of international transit routes that is why our Government came up with the initiative of Crossroads of Peace. We believe that if this unblocking takes

place, it will not only be beneficial in terms of economic prosperity for the countries of the region but also will become a significant factor of peace in the region.

So we are ready to unblock all the regional transport infrastructure, mainly with Azerbaijan, but also with Turkey, understanding that this project will help to connect East to West, North to South, and if this is implemented this will be another interesting way to connect the Gulf countries with Black Sea economic region. According to this concept, unblocking should take place with the full respect of the sovereignty and jurisdiction of the countries, but also according to the principles of equality and reciprocity," the Armenian FM emphasized.

www.massispost.com
Daily News Updates


Յեղասպանութեան 109-րդ Տարելիցի Միջոցառում Մոնթեվիտոյի «Արմենիա» Հրապարակին Վրայ



Ապրիլի 24-ին, Մոնթեվիտոյի «Արմենիա» հրապարակին վրայ տեղի ունեցաւ Հայոց ցեղասպանութեան 109-րդ տարելիցին նուիրուած միջոցառում: Ուրուկուաճայ Բազմամիութենական Կազմակերպութեան նախաձեռնութեամբ կայացած միջոցառման ծիրէն ներս ելոյթներով հանդէս եկան ՀՀ ղեսպանութեան գործերու ժամանակաւոր հաւատարմատար՝ Մարիամ Գէորգեանը եւ Ֆրանսայի ղեսպան ժան-ֆոլ Սեյտրէն:

Շնորհակալութիւն յայտնելով Ուրուկուաճի կառավարութեան ու ժողովուրդին՝ Հայոց Յեղասպանութեան միջազգային ճանաչման գործընթացին մէջ առաջամարտիկ հանդիսանալու եւ Յեղասպանութենէն մազապուրծ ազատուած հայերուն ընդունելու համար, Մ. Գէորգեան ընդգծեց, որ Ուրուկուաճը բոլոր դժուարին պահերուն մշտապէս եղած է Հայաստանի եւ հայ ժողովուրդի կողքին:

Ֆրանսայի ղեսպանը իր ելոյ-



թին մէջ նշեց, որ Ֆրանսան Հայոց Յեղասպանութեան մասին բարձրաճանաչ առաջին երկիրներէն է եւ օրէնքով ճանաչեցած է այն: Բարձր գնահատելով հայ-ֆրանսական դարաւոր բարեկամութիւնը ղեսպանը վստահեցուց, որ այն պիտի շարունակուի ամրապնդուելու եւ Ֆրանսան այսուհետեւ եւս անվերապահօրէն պիտի աջակցի Հայաստանին: Ֆրանսայի ղեսպանը նաեւ մէջբերեց Հայաստանի մասին աշխարհահռչակ երգիչ Շառլ Ազնաւուրի խօսքերէն: Ան իր ելոյթին մէջ նաեւ անդրադարձաւ Միսակ եւ Մելինէ Մանուչեաններուն եւ անոնց կեանքի կարեւոր դրուագներուն:

Բազմամիութենական Կազմակերպութեան անունով ելոյթ ունեցաւ ՄԴՀԿ Ուրուկուաճի վա-

րիչ Մարմինի փոխատենապետուհի ընկերուհի՝ Լաուրա Ասլանեան: Ան իր խօսքին մէջ նշեց, որ ցեղասպան քաղաքականութիւնը հայ ժողովրդի նկատմամբ կը



շարունակուի մինչ այսօր, որուն վառ ապացոյց է արցախահայրութեան դէմ Ատրպէյճանի սանձազերծած ցեղային զտումն ու բռնի տեղահանումը, որ միջազգային հանրութիւնը չկանխեց:

Ընկերուհի Ասլանեան կոչ ըրաւ հայրութեան ինքնաքննադատաբար մօտենալ հարցերուն՝ հասկանալու համար, թէ որոնք են մեր սխալներն ու բացթողումները, շեշտելով սփիւռքի դերակատարումը այս հարցով: «Արդեօք տեղին է եւ օրինական, որ արտասահմանէն կը փորձեն սասանել Հայոց պետականութեան կայունութիւնը եւ քաղաքական շահեր հետապնդել, երբ պետութեան ապագան վտանգի մէջ է: Մեր



մօտեցումն այն է, որ աւելի քան երբեք սփիւռքը պէտք է կանգնի Հայոց պետութեան կողքին, որուն գլխաւոր պահանջը պէտք է ըլլայ պետութեան հզօրացումն ու ժո-

Աթենքի Ակադեմիայի Նախաձեռնութեամբ Գիտական Միջոցառում Նուիրուած էր Հայոց Յեղասպանութեան 109-րդ Տարելիցին



Ապրիլի 26-ին Յունաստանի մէջ ՀՀ ղեսպանութեան եւ Աթէնքի Ակադեմիայի նախաձեռնութեամբ Աթէնքի Ակադեմիայի գլխաւոր սրահին մէջ կազմակերպուած գիտական միջոցառման, որ նուիրուած էր Հայոց ցեղասպանութեան 109-րդ տարելիցին, յատուկ հրաւերով ներկայ էր ՄԴՀԿ Յունաստա-

խօսքով: Որպէս հիմնական բանախօսներ հանդէս եկան Աթէնքի Ակադեմիայի Ակադեմիկոս Յունաստանի նախկին նախագահ Պրոկոպիա Պավլուպուլօսը, եւ Հայաստանէն հրաւիրուած Յեղասպանագէտ Արա Բեթիբեան: Արժէ չիշել, որ Արա Բեթիբեանը 2 տարի խմբագրած է



ՄԴՀԿ Յունաստանի վարիչ մարմնի ներկայացուցիչ ընկեր Յովհաննէս Շահինեան եւ ՀՀ արտակարգ եւ լիազօր դեսպան Տիգրան Սկրտչեան

նի վարիչ մարմնի ներկայացուցիչ ընկեր Յովհաննէս Շահինեանը:

Միջոցառման ներկայ էին Յունաստանի վարչապետի ներկայացուցիչ Յաննիս Խրիսուլակիսը, Յունաստանի մէջ ՀՀ արտակարգ եւ լիազօր դեսպան Տիգրան Սկրտչեանը, որ հանդէս եկաւ ողջոյնի

ՄԴՀԿ Լիբանանի պաշտօնաթերթ Արարատը:

Միջոցառման աւարտին ընկեր Շահինեանը շփումներ ունեցաւ Յունաստանի նախկին նախագահ պրն Պավլուպուլօսի, ՀՀ ղեսպան պրն Սկրտչեանի եւ պրն Արա Հեքիմեանի եւ այլ հիւրերու հետ:

ղովրդավարական մարմիններու հանդէպ յարգանքը», յայտարարեց ընկերուհի Լաուրա Ասլանեան:

Միջոցառման շրջանակին մէջ Մոնթեվիտոյի քաղաքապետարանի որոշմամբ բացուցաւ չուշատախտակ՝ ի պատիւ Անթօնիոյ Ռուբէնեանի, որ հանդիսացած է «Հայաստան» հրապարակի հիմնական նախաձեռնողը եւ ռատիօ «Արմէնիա»-ի հիմնադիր տնօրէնը շուրջ 58 տարի:

Միջոցառման ներկայ էին Ուրուկուաճի արտաքին յարաբերութիւններու նախարարի տեղակալ Նիկոլայ Ալպերթինին, Զբօ-

սաշրջութեան նախարար Էտուարտօ Սանկինետտին, Մոնթեվիտոյի քաղաքապետ Մաուրիսիօ Սունինոն, Առողջապահութեան նախարարի տեղակալ Պօլիա Սաջեանը, եւ շարք մը խորհրդարանականներ եւ քաղաքական-սարակական ցործիչներ, օտարերկրեայ ղեսպաններ, դպրոցականներ եւ համայնքի ներկայացուցիչներ:

Հանդիսութեան աւարտին առաջնորդ սրբազան՝ Յակոբ Արքեպիսկոպոս Գլնճեանի գլխաւորութեամբ հոգեւոր դասի ներկայացուցիչները աղօթեցին նահատակներու յիշատակի համար:

Ձեր Ծանուցումները Վստահեցեք «Մասիս» Շաբաթաթերթին Masis2@earthlink.net (626) 797-7680

Լարք Երաժշտանոցի «Եռաձայն Պատարագ»ը Մշակութային Փոքր Փառատոն Մը



Հայոց Մեծ Եղեռնի նահատակներու յիշատակին նուիրուած գրական-երաժշտական նշանակալի երեկոյթ մըն էր, այլ խօսքով՝ կարծէք փոքր փառատոն մը, որ տեղի ունեցաւ անցեալ Ուրբաթ Ապրիլ 26-ին, 2024 Կլենտէյլի Ալեքս թատերասրահին մէջ:

Շուրջ 1400 հոգիներու ներկայութեան սոյն յիշարժան միջոցառումին «Եռաձայն Պատարագ»ի ղեկավար՝ Թագուհի Արզումանեան, բարի գալուստի իր խօսքին մէջ ոգեկոչեց ապրիլեան Մեծ Եղեռնի

մունք էր: Անմահն Պարոյր Սեւակի «Եռաձայն Պատարագ» երկարաշունչ պոէմը՝ գեղարուեստական բարձր կատարումով մեկնաբանուեցաւ երեք խմբակներու կողմէ: Անոնք էին Ալիք Արթինեան, Չիօ Էկօ, Անի Յովսէփեան, Մելվինա Կարապետեան, Էմմանուէլ՝ Էմիլ կրտսեր Գազազ, Նուարդ Նազարեան, Արմէն Բարուրեան եւ Եւոննա Թորոսեան:

Վերոյիշեալ շնորհալի երիտասարդ ասմունքողները յայտագրի կիզակէտը հանդիսացող Պարոյր Սեւակի «Եռաձայն Պատարագ» ներկայացուցին անգիր կատարողութեամբ, կարծէք գրական ասմունք-համանուագ մը ըլլար: Այս երկարաշունչ պոէմի իւրաքանչիւր հատուածը մեկնաբանուեցաւ վերասլաց ապրումով եւ գիտակից հաղորդականութեամբ: Իրականութեան մէջ բանաստեղծական արտայայտչաձեւերով եւ ինքնատուրութեամբ՝ նոր երեւոյթ մըն էր որ կը հրամցուէր մեր հասարակութեան: Յիրաւի բազմադարեան հայ պոէմի պատմութեան մէջ «Եռաձայն Պատարագ»ը գրուած է հայրենասիրական եւ հայասիրական շունչով, քանի որ ան ձօնուած է Հայոց Յեղասպանութեան գոհերու յիշատակին: Արդարեւ, ի գուր չէ որ ներկաները պոէմի ասմունքային աւարտին յտնկալս ծափահարեցին, իրենց անվերապահ գնահատանքն արտայայտելով գեղարուեստական բարձրորակ կատարումին:

Յայտագրէն դուրս ելոյթ ունեցաւ երգիչ եւ յօրինող Ռազմիկ Պաղտարեան, ապրումով մեկնա-



նահատակներու խնկելի յիշատակը: Ան առանձնապէս շեշտեց հայ ժողովուրդի հանճարեղ գաւակներէն՝ անմահն Կոմիտասի եւ Պարոյր Սեւակի (որուն ծննդեան 100-ամեակն է այս տարի) մեծ ներդրումը 20-րդ դարու գրական-գեղարուեստական եւ երաժշտական բնագաւառներուն մէջ: Սոյն գրական-երաժշտական



երեկոյի յայտագիրը կը բաղկանար երեք մասերէ: Նախ ձեռնազանգերով, երկու տարբեր եղանակներով, հանդէս եկան Լարք Երաժշտանոցի պատանի կատարողները: Ապա անոնց հետեւեցան Լարքի երիտասարդ, խոստմնալի եւ շնորհազարդ դաշնակահարները, որոնց գեղարուեստական դիպուկ կատարումները արժանացան հանդիսականներու ջերմ ու անվերապահ գնահատանքին:

Ծրագրի երկրորդ մասը՝ աս-

բանելով «Կանչէ Կռունկ» երգը: Յայտագրի երկրորդ մասին ելոյթ ունեցան Լարք «Ծիածան» երգչախումբերը (տնօրինութեամբ Ա. Եղնազարեանի եւ Ժ. Միրզոյեանի): Անոնք մեկնաբանեցին Կոմիտասի «Սուրբ, Սուրբ», «Բարեխօսութեամբ» եւ «Տէր Լորրմեան»:

Իսկ Լարքի «Տաւիղ» երիտա-

Շար.ը էջ 15

Փերակ Շարաթօրեայ Դպրոցը Ոգեկոչեց Հայոց Յեղասպանութեան 109-ամեակը



Փաստենա քաղաքի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ Փեթակ Հաբաթօրեայ դպրոցը 27 Ապրիլ 2024, Շաբաթ միջօրէին աշակերտական յայտագիրով նշեց Հայոց Յեղասպանութեան 109ամեակը: Յայտագիրին ներկայ էին ԱՄՆ

քահանայ Քէշիշեանը, ծնողներ, մեծ հայրեր ու մայրեր, ինչպէս նաեւ ընտանեկան հիւրեր:

Ամենամեայ արարողութիւն-յայտագիրը սկսաւ Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ գեղակերտ, սրբատաշ խաչքարի առջեւ ծա-



Արեւմտեան թեմի առաջնորդ գերաշնորհ տէր Յովնան արքեպիսկոպոս Տէրտէրեանի օրհնութեամբ երկու հոգեւոր հայրեր՝ հոգեշնորհ տէր Անանիա վարդապետ Ծատուրեանը եւ արժանապատիւ տէր Նժդէհ

ղիկներ խոնարհեցնելով: Իւրաքանչիւր աշակերտ, 4էն 12տարեկան, մէկիկ մէկիկ մօտեցաւ խաչքարին, խաչակնքեց եւ իր ծաղիկը իջեցուց

Շար.ը էջ 15



ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԱՍՈՒԼԻՍ

Կազմակերպութեամբ՝

Հայկական Կրթական Բարեսիրական Միութեան

«Լիբանանի Հայ Ժողովուրդի Ներկայ Վիճակը»

Մասնաւորաբար՝

Պէյրուֆի, Հաճընի եւ Խալիլ Պատաուի Թաղամասերուն Մէջ

Նիւթը կը Ներկայացնէ՝

Արժ. Տ. Աւունդ Քինյ. Լոշիաճեան

Հոգեւոր Հովիւ Պէյրուֆի Ս. Յարութիւն Եկեղեցւոյ (Խալիլ Պատաուի)

Հինգշաբթի, Մայիս 9, 2024 երեկոյեան ժամը 8:00ին

Հ.Կ.Բ.Մ.ի Կեդրոնին Մէջ

1060 North Allen Avenue Pasadena, CA

Մուտքը ազատ է

Դերենիկին Երկիրը «ես իմ երկրիս մէջ կ'ուզեմ ապրիլ»:



ՂՈՎՏ. ԳՐԱՅՐ ԸԵՊԵՏԵԱՆ

Ապրիլ 2024, Երեւան:
Դերենիկը ծնած է Ապարան: Ան այժմ կ'աշխատի իբրեւ վարորդ եւ իր գործը կ'ընէ ամենայն գոհունակութեամբ: Ան ուրախ եւ հաղորդական անձ մըն է, որ կը սիրէ խօսիլ եւ պատմել: Ան կ'ուզէ խօսիլ իւրաքանչիւր անհատի հետ, որ իր ինքնաշարժը կը գործածէ շրջագայելու եւ մէկ տեղէ միւսը տեղափոխուելու համար, բայց նաեւ կ'ուզէ պատմել իր պատմութիւնը: «Ես այս գործը միայն զբաղմունքի համար կ'ընեմ», - ըսաւ Դերենիկ, երբ զիս կը փոխադրէր Երեւանի Սարեան փողոցէն դէպի Ալեք Մանուկեան: Ես Երեւանի պետական համալսարանի ճարտարապետական բաժանմունքէն շրջանաւարտ եղած եմ», շարունակեց ան՝ աւելցնելով, «Հանգստեան կոչուեցայ ու տունը մնացի, եւ այդ ինձի պատճառեց հոգեկան ճնշուածութիւն»:

Դերենիկ 66 տարեկան է, եւ գաւազները իր հոգեկան տագնապին լուծում գտնելու համար զինք քաջալերած են, որ այս գործը ընէ՝ գէթ կիսաժամ դրութեամբ: «Մինչեւ կէսօր կ'աշխատիմ, - ըսաւ Դերենիկ: - Ատկէ ետք կ'երթամ տուն եւ թոռնիկներու հետ կ'անցընեմ»:

Նայեցայ ժամացույցիս: Արդէն կէսօր եղած էր: «Ես երեւի քու վերջին յաճախորդդ եմ այսօր», ըսի Դերենիկին:

«Այո՛, վերջինն ես, բայց շատ բախտաւոր կը զգամ, որ սփիւռքէն եկած հայու մը հետ կը զրուցեմ», ըսաւ Դերենիկ:

Դերենիկի խօսակցութեան մէջ կար ջերմութիւն: Ան կը զրուցէր եւ կը պատմէր, բայց կը զգայի, որ ունէր հրճուանք մը: Իսկ հրճուանքին պատճառը: Ան կ'ուզէր իր պատմութիւնը պատմել հայրըրի մը:

«1990-ին Ազրպէյճանի դէմ պատերազմին մասնակցած եմ, - ըսաւ Դերենիկ: - Այս ձախ ոտքէս ծանր կերպով վիրաւորուեցայ: Բայց վիրաւորուելուն հետ ես ալ խփեցի իրենց», ըսաւ ան քիչ մը ժպտելով, բայց նոյնքան նաեւ՝ հպարտութեամբ:

Պատերազմէն ստացած վէրքը տակաւին իր ազդեցութիւնը ձգած է Դերենիկին վրայ: Ան մինչեւ այսօր տակաւին դեղ պէտք է առնէ, որպէսզի լաւանայ: «Այս դեղերն ալ իմ ամէնօրեայ կերակուրս են», ըսաւ Դերենիկ՝ միշտ ժպտալով պահելով իր դէմքին վրայ: Որքան կը նայէի Դերենիկի դէմքին ու անոր ժպտին, նոյն-

քան այդ ժպտի ետին կը տեսնէի իր ազգային հպարտութիւնը: Հպարտութիւնը, որ կերտած է իր ազգային ինքնութիւնը եւ նոյն այդ ինքնութիւնը բնորոշող հայրենի հողը: Ու տակաւին՝ այդ հողին կանչը: «Չորս տարի Սպանիա մնացի եւ հոն աշխատեցայ», ըսաւ Դերենիկ: «Բայց չկրցայ դիմանալ եւ վերադարձայ Հայաստան: Ես իմ երկրիս մէջ կ'ուզեմ ապրիլ», նշեց ան:

Հրաժեշտ տուի Դերենիկին, բայց իրեն հետ ապրեցայ այդ քանի մը վարկեանները եւ հայրենի հողին վրայ՝ հայուն երկրին հարազատութիւնը: Հարազատութիւնը, որ հայը հայուն կը միացնէ:

Ծիծեռնակաբերդը: Յուշահամալիրին տակ կեցած՝ կը դիտեմ վառող կրակն ու կրակին չորս կողմը տեղադրուած յարգանքի տուրքի խորհրդանիշ ծաղիկները: Հոս կայ պատմութիւնը, որ դարձեալ կ'ապրիմ: Պատմութիւնը, որ ստեղծած է մեծ արհաւիրք: Իւրաքանչիւր հայ նահատակ, ներառեալ՝ ընտանեկան իմ քսանհինգ պարագաներս: Եթէ իմ հարազատներս չեմ տեսած եւ չեմ ճանչցած, բայց գիտեմ իւրաքանչիւրը իրենց նկարներով: Եւ հոն՝ յուշահամալիրի վառող կրակին ընդմէջէն, այդ նկարները կարծէք մէկ-մէկ դուրս կու գան իբրեւ մեռած-ապրող իրականութիւններ: Բայց ինչպէ՞ս անոնք չապրին, երբ իմ էութիւնս կազմած են, անոնք իմ

մէջս են եւ անդադար ինձի կը յուշեն. «Մենք մեռանք, որպէսզի դուն ապրիս, Հրա՛յր»:

Այս ապրող-չապրող յիշատակները պահ մը ընդհատեցի: Հնդիկ կին մը նոյնպէս մօտեցաւ կրակին եւ յարգանքով ու ակնածանքով գլուխը խոնարհեցուց: Ան կարծէք մտած էր իր աշխարհին մէջ, երբ իրեն հարցուցի. «Ի՞նչ կը զգաս այս յուշահամալիրին ստեղծած խորհուրդին առջեւ»:

Չեմ գիտեր, թէ պէտք եղածէն աւելի համարձակ եղած էի: Բայց ուզեցի գիտնալ իր ներաշխարհի սեւեռումները՝ իբրեւ օտարականի: «Շատ ցաւալի է», ըսաւ ան՝ աւելցնելով. «Ես Հնդկաստանի Քաշմիր շրջանէն եմ, եւ մենք ալ ապրած ենք շատ ցաւեր»:

Հնդիկ կնոջ ցաւին հետ ես վերադարձայ իմ ցաւիս: Այս այն ցաւն է, որ իւրաքանչիւր հայ իր մէջ կրած-շալկած է աւելի քան հարիւր ինը տարի: Այս այն ցաւն է, որ կը շարունակուի իւրաքանչիւր հայու մէջ եւ սերունդէ սերունդ: Այս ցաւը դարձած է հայուն հաւաքական ինքնութիւնը, որ չի մնար ցաւի սահմաններուն մէջ: Այս ցաւը ճեղքեց մահուան պատերը եւ ստեղծեց հայուն նոր կեանքը: Այս այն նոր կեանքն է, որ կը շարունակուի մինչեւ այսօր:

Ծիծեռնակաբերդի յուշահամալիրի այդ վառող կրակին ընդմէջէն դարձեալ տեսայ նոյն այս ցաւը, որ կ'ապրէր մահը, բայց նոյն այդ մահուան մէջէն դուրս կը հանէր եւ կը շինէր նոր կեանքը: Այն կեանքը, որ ես եւ իւրաքանչիւր հայ ապրեցանք ու պիտի շարունակենք ապրիլ:

«Ինչպէ՞ս պէտք է ապրիլ»:

Դերենիկը գտած է իր ապրելու յենարանը: «Ես իմ երկրիս մէջ կ'ուզեմ ապրիլ»:

Իսկ ե՞ս: Ես կ'ապրիմ Պէյրուս, Կիպրոս, Քուէյթ ու տակաւին այլ տեղեր:

Դերենիկ պիտի շարունակէ ապրիլ իր երկրին՝ Հայաստանի մէջ: Եւ ես պիտի շարունակեմ ապրիլ իմ երկիր-երկիրներուս մէջ՝ սփիւռքի այս կամ այն տարածքներուն մէջ:

Կայ միացնող օղակը Դերենիկի եւ իմ միջեւ: Այս այն օղակն է, որ կը սկսի ֆիզիքական երկրէն

եւ կ'անցնի հոգեկանին: Այս օղակը Դերենիկին երկիրն է՝ Հայաստանը: Հայաստանը, որ մէկ կողմէ կը շնորհէ ֆիզիքական կեցութիւն, բայց նաեւ կը լիցքաւորէ հոգեկանը: Հոգեկանը, իմա՝ պատմութիւնը, մշակույթը, ինքնութիւնը, հաւատքը, Յեղասպանութիւնը ու տակաւին՝ հպարտութիւնը: Այս բոլորը դուն կրնաս ապրիլ՝ անկախ անկէ, թէ ֆիզիքայէս ո՛ւր կը բնակիս իբրեւ հայ: Հայաստանը՝ իբրեւ պետականութիւն, ունի իր ֆիզիքական դրուածքը, որ կը մարմնաւորուի իր աշխարհագրական տարածքով եւ սահմաններով: Ան, ըստ պատշաճի, պէտք է յարգէ եւ ընկալէ համաշխարհային ընտանիքին կողմէ ընդունուած միջպետական արժեքափերը: Հայաստան նոյնքան եւ նոյնպէս հոգեկան երկիրն է: Հոգեկան երկիր՝ իւրաքանչիւր հայու համար, անկախ անկէ, թէ հայը ո՛ւր կ'ապրի:

Ծիծեռնակաբերդի յուշահամալիրի կրակներուն մէջէն՝ ապրիլ 2024, ես դարձեալ տեսայ իմ հարազատներուս մեռած-ապրող կեանքերը, եւ թէ ինչպէ՞ս անոնք այդ նոյն կրակներուն մէջէն ճեղքեցին մահուան պատը եւ ինձի դարձեալ տուին պատուէր մը. «Հրա՛յր, մենք մեռանք, որպէսզի դուն ապրիս»:

Ես պիտի ապրիմ իմ կեանքս, ինչպէս որ իւրաքանչիւր հայ պիտի ապրի իր կեանքը: Եթէ ֆիզիքայէս պիտի ապրիմ-ապրինք սփիւռքի տարածքին, բայց հոգեպէս պիտի ապրիմ-ապրինք Հայաստանի մէջ: Հայաստանը՝ Դերենիկին երկիրը, միացնող օղակն է հայուն ֆիզիքական ու հոգեկան կեանքերուն: Ան այդ երկիրն է, որ կ'ընդգրկէ հայուն էութիւնը իր ամբողջական հասկացողութեան ընդմէջէն: Ան հայուն ապրած, ապրող եւ ապրելիք կեանքերուն երաշխիքն է, որ հայուն պատմութիւնը պիտի զնէ պատմութեան շարունակականութեան գործընթացին մէջ:

Դերենիկին երկիրը: Բայց նաեւ՝ իմ եւ իւրաքանչիւր հայուն երկիրը:

Այն երկիրը, որ հայուն ֆիզիքական ու հոգեկան կեանքերը կը միացնէ: Եւ անպայմանօրէն պէտք է շարունակէ միացնել:

Եւ այս երկիրը Հայաստանն է:

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԸՆԿԵՐԱՅԻՆ ԽՐԱԽԱՃԱՆՔ

Կազմակերպութեամբ՝ ՄԴՀԿ «Մապահ Գիւլ» Մասնաճիւղի
Ի նպաստ «ՄԱՍԻՍ» Շաբաթաթերթի
Մասնակցութեամբ՝
Սիրուած երգիչ՝ Դաւիթ Մամուկեանի
ընկերակցութեամբ՝ Արամ Լեփեճեանի
Տեղի կ'ունենայ՝
Շաբաթ, Յունիս 22, 2024-ի երեկոյան ժամը 8-էն սկսեալ
Փասատինայի ՀԿԲՄ-ի Կեդրոնի Սրահէն ներս
1060 N. Allen Ave., Pasadena, CA 91104
Մուտքի Լուր՝ 100

Շառլ Ազնաւուրը՝ Քանդակագործ Մկրտիչ Մազմանեանի Աչքերով. Երեւանում Շանսոնյեիմ Նուիրուած Յուգահանդէս Բացուեց



ARMENPRESS NEWS AGENCY

Գիւմրու Յովհաննէս Շիրազի Յուշատուն-Թանգարանի Ֆոնտը Համալրուեց Նոր Ցուցանմուշներով



ԱՆԺԵԼԱ ՀԱՄԲԱՐՉՈՒՄԵԱՆ

Քանդակագործ Մկրտիչ Մազմանեանի իր քանդակներով նորովի է ներկայացրել աշխարհահռչակ շանսոնյէ Շառլ Ազնաւուրին: Նա քանդակի է վերածել ոչ միայն Ազնաւուրի խօսուած դէմքն ու արտիստիկմը, այլեւ նրա հրաշալի երաժշտութիւնը, որը տարիներ շարունակ ոգեւորել է Մազմանեանին:

Քանդակագործի՝ Ազնաւուրի 100-ամեակին նուիրուած ցուցահանդէսի բացման հանդիսաւոր արարողութիւնը տեղի ունեցաւ Ապրիլի 26-ին «Two Arcs» ցուցասրահում:

Ներկայացուած են Ազնաւուրի պատկերող դիմաքանդակներ, կոմպոզիցիոն աշխատանքներ ու դժանկարներ: Ստեղծագործութիւններն Ազնաւուրի ուղիղ վերարտադրութիւնը չեն, այլ էմոցիոնալ պատկերներ են, վերաբերմունք ու յարգանքի տուրք մեծ շանսոնյէին:

Ազնաւուրին նուիրուած հաւաքածու ունենալու մասին Մկրտիչ Մազմանեանը նախապէս չի մտածել: Ամէն բան ինքնաբերաբար է ստացուել: Հեղինակը խոստովանում է՝ անում է այն, ինչ սրտից է բխում:

«Անչափ ուրախ եմ Շառլին նուիրուած այս ցուցահանդէսի բացման եւ իմ պատկերազարդ շնորհանդէսի համար: Իսկապէս երջանիկ եմ», - ասում է Մազմանեանը:

Նա կարծում է՝ արուեստագետը պէտք է դուրս գա ակադեմիական ոճից եւ տրուի ստեղծագործական ազատութեանը, քայլի ժամանակի հետ: Հաւանաբար այդ մտածելակերպի արդիւնքում է քանդակագործը զարմանալի աշխատանքներ ստեղծել, որոնք մտածելու առիթ են տալիս:

«Գուցէ մէկ օրուայ մէջ մի արձան աւարտին հասցնեմ, սակայն Շառլի քանդակների վրայ աշխատել եմ շուրջ երկու տարի: Ազնաւուրին պաշտում եմ 1960-ականներից: Առաջ սիրում էի լսելով, յետագայում հպարտանում էի, որ նման մեծ հայ կայ աշխարհում, իսկ հիմա հպարտանում եմ, որ նա որպէս երգիչ, կատարող բանաստեղծ եւ դերասան արել է այն, ինչ ոչ ոք մինչ օրս չի արել բեմում», - շեշտում է Մազմանեանը:

Նա ցուցադրել է Ազնաւուրին նուիրուած ստեղծագործութիւններ մի մասը միայն, ներկայացրել մոնումենտալ արձանների էսքիզներ, որոնք յետագայում կարող են զարգարել տարբեր քաղաքների

պուրականներն ու փողոցները:

Մկրտիչ Մազմանեանի խօսքով՝ իւրաքանչիւր ստեղծագործութիւն յոյզերից է ծնւում, սակայն, եթէ քանդակագործը միայն յոյզերին տրուի, չի կարող կառավարել աշխատանքը: Իւրաքանչիւր դիմաքանդակ մի երգի ներշնչմամբ է կերտել, ասում է՝ երգը թարգմանել է՝ այն վերածելով քանդակի, ծաւալների:

«Երգերի անգամ վերնագրերը չեմ յիշում, սակայն ես գրեթէ երաժշտագէտի պէս հասկանում եմ Շառլի երգերը, վերլուծում եմ ու վերածում եմ ծաւալների: Նա իմ ուսուցիչն է եղել: Հայաստանից յետոյ էստոնիայում իմ ուսուցիչները այնքան էլ բարձրակարգ չէին եւ Ազնաւուրն ինձ փրկեց. ես աշխատում էի ծաւալի մէջ տեսնել Ազնաւուրի նշանները, երգերը», - պատմում է քանդակագործը:

Ցուցահանդէսը, որում ներկայացուած են քանդակի ակադեմիական ստեղծագործութիւններ, համադրել է Մկրտիչ Մազմանեանի դուստրը՝ Զառա Մազմանեանը: «Մազմանեանի տղանդի արդիւնքում ստանալու ենք այն էմոցիոններն ու լիցքերը, որ ուժ կը տան մի պահ հեռանալ իրականութիւնից», - նշում է նա ու յիշեցնում, որ հայրը ցուցահանդէսներով ներկայանում է աշխարհի տարբեր հարթակներում, սակայն երկար տարիներ անց նրա առաջին ցուցահանդէսն է երեւանում, ինչը մեծ պատասխանատուութիւն է:

«Այս ցուցահանդէսը նուիրուած է Ազնաւուրին, նրա արուեստին, կեանքին: Որոշեցինք ներկայացնել նրա էմոցիոնալ դաշտը: Բոլորս Ազնաւուրի հետ որեւէ կապ ունենք՝ ուրախութիւն, թախիծ, սէր: Այս ցուցահանդէսով փորձում ենք բոլորին հասցնել այդ յոյզերը, որ ուրախութիւնից յուզուեն, ինչու չէ՞ պարեն», - ընդգծում է Զառա Մազմանեանը:

Ցուցահանդէսին նաեւ տեղի ունեցաւ Մկրտիչ Մազմանեանի պատկերազարդ շնորհանդէսը: Գիրքը Մազմանեանի տարիների աշխատանքի տրամաբանական շարունակութիւնն է: Գրքում ամփոփուած են վարպետի աշխատանքները՝ ուսանողական տարիներից մինչ օրս: «Այն արդէն հրատարակել էինք, երբ ստեղծուեցին նոր քանդակներ, որոնք չհասցրինք զետեղել գրքում, սակայն Մազմանեանի յառաջիկայ անհատական ցուցահանդէսի ընթացքում յոյս ունեմ՝ երկրորդ գիրքը կը հրատարակենք», - նշում է Զառա Մազմանեանը:

ԱՐՄԵՆՈՒՅԻ ՄԻՈՅԵԱՆ

Յովհաննէս Շիրազի 110-ամեակի յօբելեանական միջոցառումների շրջանակներում Գիւմրու Յովհաննէս Շիրազի յուշատուն-թանգարանի ֆոնտը համալրուեց նոր ցուցանմուշներով: Ֆոնտը համալրուեց արխիւային բացառիկ փաստաթղթերով, որոնք թանգարանին է նուիրել Շիրազի պետական համալսարանը. դրանք Լենինականի մանկավարժական ինստիտուտի 1935-1936 թթ. հրամանագրքում ուսանող Յովհաննէս Շիրազի մասին հրամաններն են:

«Լենինականի մանկավարժական ինստիտուտն այս տարի ստանում է յօբելեանական 90-ամեակը: Արխիւային փաստաթղթերի հետ աշխատելիս յանկարծ յայտնաբերեցինք, որ առաջին ուսումնական տարուայ առաջին կիսամեակում երկու հրաման առնչուած է Յովհաննէս Շիրազին, որոնց բովանդակութիւնը եւս մէկ անգամ փաստում է, որ բանաստեղծը ըմբոստ էր եւ յաճախ էր յայտնում հայրենիքի շուրջ ծաւալուող քննարկումների կիրակետում», - ներկայացնում փաստաթղթերը՝ նշեց Գիւմրու համալսարանի մշակուցի եւ երիտասարդութեան հարցերի բաժնի պետ Լիլիթ Թովմասեանը:

Ցուցանմուշների ներկայացմանը յաջորդել են Շիրազեան ընթերցումները՝ Գիւմրու Մտորումների թատրոնի դերասանների կողմից:

Նշենք, որ բանաստեղծի յուշատուն-թանգարանը հին կառույց է՝ 1868 թուականի, եղել է մեծահասարակական կարգի տեսչականի տուն: Տարիների ընթացքում եղել է նաեւ արտադրամաս: Տունը հենց այն նույն փողոցում է, որտեղ գտնուում է Ավետիք Իսահակեանի տուն-թանգարանը: Չնայած Շիրազը չի հասցրել ապրել այս տանը, բայց հենց այստեղ՝ Իսահակեանի տան հարեւանութեամբ է ցանկացել օրերից մի օր թանգարան ունենալ: Երբ 1983 թուականին եկել է Իսահակեանի տուն, այդ ժամանակ կարէն Դէմիրճեանը մի քանի տուն է ցույց տուել Շիրազին, բայց նա այս մէկն է հաւանել ու ասել՝ «Վարպետի տունն է կողքը, իմ տունս էլ կուգայ»:

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԻՆ
ՄԱՐԻ ՔԻԻՐՔՃԵԱՆԻ մահուան առիթով Տէր եւ Տիկ. Ժիրայր եւ Սիմա Կիրակոսեաններ շնորհակալութիւն կը յայտնեն բոլոր անոնց, որոնք մասնակից եղան իրենց սուգին, հեռաձայնելով, այցելութեամբ եւ փոխան ծաղիկեպսակի նուիրատուութիւններով:
Առ այդ \$200 կը նուիրեն «Մասիսին»:

ՅԱՒԱՅԱԿԱՆ
ՄԱՐԻ ՔԻԻՐՔՃԵԱՆԻ մահուան տխուր առիթով Հ.Մ.Մ.ի Տիկնայ Միութեան վարչութիւնը իր խորագրաց ցաւակցութիւնը կը յայտնէ հանգուցեալի հարազատներուն, մասնաւորաբար Տէր եւ Տիկ. Ժիրայր եւ Սիմա Կիրակոսեաններուն:
Առ այդ փոխան ծաղիկեպսակի \$500 կը նուիրեն «Մասիս» շաբաթաթերթին:

ՄԱՐԻ ՔԻԻՐՔՃԵԱՆԻ մահուան առիթով Տիար Մինաս եւ Տիկ. Ազնիւ Մուժաֆեաններ իրենց խորագրաց ցաւակցութիւնները կը յայտնեն հանգուցեալի հարազատներուն, մասնաւորաբար Տէր եւ Տիկ. Ժիրայր եւ Սիմա Կիրակոսեաններուն:
Առ այդ \$200 կը նուիրեն «Մասիսին»:

ՊՍԺ-ի 12-րդ Ախոյեանական Տիտղոսը



ՊՍԺ-ն նուաճեց Ֆրանսայի ախոյեանի 12-րդ տիտղոսը: 31-րդ հանգրուանին երկրորդ տեղը գտնուող «Մոնաքոն» 2:3 արդիւնքով պարտուեցաւ «Լիոնէն» եւ կորսնցուց ՊՍԺ-ին հասնելու կարելիութիւնը: Ֆրանսայի առաջնութեան աւարտէն երեք հանգրուան առաջ ՊՍԺ-ն ունի 70, «Մոնաքոն»՝ 58 կէտ:

«Արսենալը» Պարտութեան Մատնեց «Թոթենհեմին» Եւ Առաջատարն Է

Անգլիոյ առաջնութեան 35-րդ հանգրուանին «Արսենալը» հիւրընկալեց «Թոթենհեմին» եւ պարտութեան մատնեց 3:2 արդիւնքով: «Արսենալէն» մրցակիցի դարպասը գրաւեցին անգլիացի յարձակող Պուկայօ Սական ու գերմանացի կիսապաշտպան Կայ Հաւերցը: «Թոթենհեմի» տանիմար քաջի կիսապաշտպան Փիեր-էմիլ Հոյպերկը գրաւեց սեփական բերդըը: 35 խաղէն յետոյ «Արսենալ» 80 կէտով կը գլխաւորէ մրցաշարային աղիւսակը:

Կուարտիոլի Եւ Հոլանտի Կոլերը Յաղթանակ Ապահովեցին «Մանչըսթըր Սիթիին»

Անգլիոյ առաջնութեան 35-րդ հանգրուանին ախոյեան «Մանչըսթըր Սիթիին» հիւրընկալեց «Նոթինգեմ Ֆորեսթին» եւ առաւելութեան հասաւ 2:0 արդիւնքով: «Սիթիի» կոլերը նշանակեցին խորուած պաշտպան Եոշիօ Կուարտիոլին ու նորուէկեացի յարձակող Էրլինկ Հոլանտը: 34 խաղէն յետոյ «Մանչըսթըր Սիթիին» 79 կէտով երկրորդն է եւ 1 կէտ է ետ առաջատար «Արսենալէն», որ կատարած է 35 հանդիպում:

«Լիվերփուլի» Եւ «Ուեստ Հեմի» Խաղը Հաւասար Վերջացաւ

Անգլիոյ առաջնութեան 35-րդ հանգրուանին «Լիվերփուլը» Լոնտոնի մէջ հիւրընկալեց «Ուեստ Հեմին» եւ բաւարարուեցաւ 2:2 արդիւնքով: 35 խաղէն յետոյ «Լիվերփուլը» 75 կէտով երրորդն է:

«Ինթերի» Յաղթանակը, Միսիթարեանի Կոլային Փոխանցումը

Իտալիոյ առաջնութեան 34-րդ հանգրուանին նորընծայ ախոյեան «Ինթեր» Միլանի մէջ մրցեցաւ «Թորինոյի» հետ: Իտալացի Սիմոնէ Ինձագիլի գլխաւորած խումբը յաղթեց 2:0 արդիւնքով: Տուպլի հեղինակ դարձաւ թուրք կիսապաշտպան Հական Չալհանօղլուն: Կոլային փոխանցում կատարեց Հենրիխ Միսիթարեանը, որ փոխարինուեցաւ 63-րդ վայրկեանին: Անցած հանգրուանին ախոյեանի տիտղոսը նուաճած «Ինթեր» վաստակած է 70 կէտ:

«Ռեալ» Պարտութեան Մատնեց «Ռեալ Սոսիետատին»

Սպանիոյ առաջնութեան 33-րդ հանգրուանի մեկնարկային խաղին առաջատար «Ռեալը» հիւրընկալեց «Ռեալ Սոսիետատին» եւ յաղթեց 1:0 արդիւնքով: Միակ կողմ 29-րդ վայրկեանին նշանակեց 19-ամեայ թուրք կիսապաշտպան Արտա Կիլերը: «Ռեալ» 84 կէտով կը գլխաւորէ մրցաշարային աղիւսակը եւ 14 կէտ առաջ է երկրորդ տեղը գտնուող «Պարսելոնայէն», որ մէկ հանդիպում քիչ կատարած է:

Պարսելոնան» Ստադիոն Ե Վաճառել Ռոբերտ Լեւանտովսկիին

Սպանիոյ ախոյեան «Պարսելոնան» մտադիր է ամրան վաճառել լեհ յարձակող Ռոբերտ Լեւանտովսկիին, կը հաղորդէ Catalunya Radio-ն: Նպատակը ակումբի ֆինանսական վիճակի կայունացումն է: «Պարսելոնան» կը ցանկայ ազատուիլ Լեւանտովսկիի բարձր աշխատավարձի

Բարեղամ Յարութիւնեանը Եւ Նարեկ Մանասեանը Բռնցքամարտի Եւրոպայի Առաջնութեան Արծաթ Սետալակիրներ



Հայաստանի բռնցքամարտի հաւաքականի անդամներ՝ Բարեղամ Յարութիւնեանը եւ Նարեկ Մանասեանը դարձան Եւրոպայի առաջնութեան արծաթէ մետալակիր: Սերպիոյ մայրաքաղաք Պելկրատի մէջ ընթացող բռնցքամարտի Եւրոպայի առաջնութեան տղոց 48 քի ծանրութեան եզրափակիչին Բարեղամ Յարութիւնեանը մրցեցաւ Ռուսաստանը ներկայացնող Էտմոնտ Խուսոյեանի հետ եւ զիջեցաւ 5:0 արդիւնքով: 92 քի ծանրութեան եզրափակիչին Նարեկ Մանասեանը պէտք է մրցեր Ռուսաստանէն Մուսլիմ Հաջիմակոմետովի հետ, սակայն հայ բռնցքամարտիկը չներկայացաւ ու յաղթանակը շնորհուեցաւ ուսու մարզիկին:

Արթուր Դաւթեանը՝ Եւրոպայի Փոխախոյեան

Թուրքիոյ Ողիմպիական խաղերու պրոնզէ մետալակիր, աշխարհի ախոյեան, Եւրոպայի կրկնակի ախոյեան Արթուր Դաւթեանը նուաճեց Իտալիոյ Ռիմինի քաղաքի աւարտին մօտեցող սպորտային մարմնամարզութեան Եւրոպայի առաջնութեան արծաթէ մետալը: Հենացատկի եզրափակիչին ան հաւաքեց 14.850 կէտ: Ախոյեանի տիտղոսը նուաճած բրիտանացի Ջեք Ջերմեյնի արդիւնքն է 14.883:



Հայաստանի խումբի առաջատարը որակաւորման փուլին վաստակած էր 14.416 կէտ: Առաջին ցատկի գնահատականը 15.100 էր: Երկրորդ ցատկի ժամանակ ցատկի բարդութիւնը ան փոխեց: Մրցավարները գնահատեցին 13.733 կէտ:

Եւրա Սովսիսեանը Շնորհաւորեց Հենրիխ Միսիթարեանին



Ֆուլթոլի Հայաստանի հաւաքականի նախկին յարձակող, Հիւսիսային Ամերիկայի մէջ Հայաստանի ֆուլթոլի ֆետերացիայի ղեկավար Եւրա Սովսիսեանը շնորհաւորեց Հենրիխ Միսիթարեանին Միլանի «Ինթերի» կազմին հետ Իտալիոյ ախոյեան դառնալուն առիթով: «Կը շնորհաւորեմ առաջնութեան յաղթանակի առիթով: Դուն շատ աշխատած ես եւ արժանի ես այս յաջողութեան: Վայելէ՛ պահել», - գրած է Եւրա Սովսիսեանը ֆէյսպուքի իր էջին մէջ: Հենրիխ Միսիթարեանը «Ինթերի» հետ դարձած է նաեւ Իտալիոյ գաւաթակիր եւ կրկնակի սուփերգաւաթակիր:

Ծախսէն: Այս մրցաշրջանին Լեւանտովսկիի եկամուտը կը հասնի 26 միլիոն եւրոյի, իսկ յաջորդ մրցաշրջանին կը կազմէ 32 միլիոն եւրո: Transfermarkt-ը 35-ամեայ ֆուլթոլիստի փոխանցման արժէքը կը գնահատէ 15 միլիոն եւրո: Անոր պայմանագիրը «Պարսելոնայի» հետ նախատեսուած է մինչեւ 2026թ. Յունիս: